

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԻՐԱՅՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻՅ Է»

Օգոստոսի 18-ին, երկրի կառավարության հերթական նիստին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, մեկնաբանելով երկրի էկոնոմիկայում դրական միտումների բեման, հայտարարեց, որ «Վրացական երազանքի» կարելի է ձեռքբերումներից մեկը Ռուսաստանի, ինչպես նաև Եվրամիության իրացման շուկաների բացումն էր:

- Մենք շուկաները բացեցինք: Քանի դեռ իրացման շուկաները փակ էին, մարդիկ ակտիվ գործելու շարժառիթ չունեին: Իշխանության գլուխ «Վրացական երազանքի» գալուց հետո, մենք բացե-



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

COVID - 19

ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ ԿՐԿԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԴԱՌՆՈՒՄ ՆԱԵՎ ԲԱՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ



Օգոստոսի 17-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը:

Կի տարածումը կամխելու նպատակով, համակարգող խորհուրդը որոշում ընդունեց պաշտպանիչ դիմակ կրելը կրկին պարտադիր դարձնել նաև բաց տարածքներում: Որոշումը ուժի մեջ է մտել օգոստոսի 17-ից:

Առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեի խոսքով, փակ եւ բաց տարածքներում պարտադիր է պաշտպանիչ դիմակի օգտագործումը:

- Խորհրդի որոշմամբ, ավելացվել է նոր կանոնակարգ, որը վերաբերում է պաշտպանիչ դիմակ պարտադիր կրելուն: Այ-

սօրվանից պարտադիր է օգտագործել պաշտպանիչ դիմակ բաց եւ փակ տարածքներում, ինչը, մեր կարծիքով, հաշվի առնելով ներկայիս համավարակը, կլինի ամենակարեւոր եւ արդյունավետ միջոցներից մեկը, որպեսզի կարողանանք արդյունավետ հաղթահարել չորրորդ ալիքը,- հայտարարեց Էկատերինե Տիկարաձեն:

Դիշեցնենք, որ մեկ շաբաթ առաջ խորհուրդը որոշում էր կայացրել պարտադիր դարձնել պաշտպանիչ դիմակ կրելը բաց տարածքներում, որտեղ հավաքվելու էր ավելի քան հինգ մարդ:

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է



ԱՊՐԻՐ ԶԱՆՈՒՆ ՎՐԱՑ-ԶԱՅՎԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅԱՆ

«Վրաստանը» մեկ այլ նշանակություն ունի հատկապես այն մարդկանց համար, ովքեր մեծապես կարեւորում են վրաց-հայկական բազմադարյան ու բազմուղորտ կապերը: Նմաններից մեկն ահավասիկ էս են, ով, 2009 թվականից աշխատանքի անցնելով Վրաստանում Վրաստանի դեսպանությունում, սիրել է հայ մշակույթը, առավել մանրամասն ծանոթացել հայոց պատմությանն ու իրականությանը: Ապա սովորել էրեւանի պետական ու նաև Վ.Բրյուսովի անվան լեզվախոսարարական համալսարաններում: Այժմ գործունեությունն շարունակում են թբիլիսիում, անշահախնդրորեն ու նվիրաբար, ժամանակ առ ժամանակ հայերենից վրացերեն ու հակառակը հայ ու

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ԵՐԿԱՐԱՎԵՑՈՒԹՅՈՒՆ ՔԵԶ, «ՎՐԱՍՏԱՆ»

Լրացավ մեր սիրելի «Վրաստան» թերթի մեկ-դարյան հոբելյանը: Իրոք, բոլորիս համար այն շատ հարագատ է: Զամենայնդեպս, «Վրաստանը» այդպիսին է ծալկացիներիս համար: Այդուհանդերձ, խոսեմ միայն Դարաքով գյուղի անունից: Դարաքովի բնակիչներին համար «Վրաստան», իրոք, ցանկալի, հարագատ ու սպասված է յուրաքանչյուր ընտանիքում: Դա կարող են հաստատել ողջ պատասխանատվությամբ, քանի որ տասնամյակներով գլխավորել են նախ Դարաքովի պետական տնտեսությունը, 2006 թվականից դեռ գյուղապետն էի, իսկ հիմա Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ներկայացուցիչն են Դարաքով գյուղում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՆՐԵՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Օգոստոսի 18-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագիրը: Վարչապետը նշեց, որ կառավարության նիստում կընդունեն ծրագիր, իսկ մյուս շաբաթվա սկզբին Ազգային ժողովում տեղի կունենա քննարկում:

Հայաստանի կառավարության ծրագիրը հիմնված է 2021 թվականի հունիսի 20-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավի ընթացքում Հայաստանի քաղաքացիների առաջ ստանձնած պարտավորությունների, նրանց տված նախընտրական խոստումների, Հայաստանի վերափոխման՝ մինչև 2050 թվականի ռազմավարության վրա, ասաց Նիկոլ Փաշինյանը:



Ծրագիրը բաղկացած է 6 բաժիններից՝ առաջին բաժինը ներառում է անվտանգությունը եւ արտաքին քաղաքականությունը, երկրորդը՝ տնտեսությունը, երրորդը՝ ենթակառուցվածքների զարգացումը, չորրորդը՝ մարդկային կապիտալի զարգացումը, հինգերորդը՝ իրավունքը եւ արդարադատությունը, վեցերորդը՝ ինստիտուցիոնալ զարգացումը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՈՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՉԵԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԵՏ

Օգոստոսի 16-ին Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտած Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն հրաժեշտի հանդիպում ունեցավ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:



Հանդիպմանը Աժ նախագահը բարձր գնահատեց հայ եւ վրացի ժողովուրդների միջեւ առկա հարաբերություններն ու շնորհակալություն հայտնեց Գիորգի Սագանելիձեի դիվանագիտական ծառայության ընթացքում այդ ուղղությամբ կատարած

նպաստավոր աշխատանքի համար: Աժ նախագահը հույս հայտնեց, որ համագործակցությունը կլինի շարունակական: Իր հերթին, Գիորգի Սագանելիձեն շնորհակալություն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՆԵՎԷՅ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՍՈՐ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՈՆԸ

Օգոստոսի 15-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Աստվածամոր Վերափոխման տոնը: Այն հինգ տաղավար տոներից չորրորդն է: Աստվածամոր տոնը Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում նշվեց Սուրբ պատարագներով եւ խաղողորհնության կարգով:



Վաղ առավոտից թեմի եկեղեցիների խորանները զարդար-

վել էին օրվա խորհրդանիշ խաղողների (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

